ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

10 հուլիսի 2025 թվականի N 334-Ա

«ԿԱՊԱՆԻ N 1 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆ ԼՈՒՍԻՆԵ ԶԱՔԱՐՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԱՐՁԱԿՈՒՐԴԻ ՉՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՄԱՍԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՆՐԱ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ ՆՈՒՅՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱՑՎԱԾ ԿՐԹԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳԾՈՎ ՏՆՕՐԵՆԻ ՏԵՂԱԿԱԼ ՄԵԼԻՆԵ ԿՈՍՏԱՆՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և 13-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 160 և 163-րդ հոդվածներով, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի օգոստոսի 11-ի N 1599-Ն որոշման հավելվածի 1-ին կետը և «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լ. Զաքարյանի դիմումը՝

ո ր ո շ ու մ եմ.

1. «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրեն Լուսինե Զաքարյանին 2025 թվականի հուլիսի 14-ից օգոստոսի 11-ը ներառյալ տրամադրել 2024-2025 թվականների աշխատանքային տարվա իր ամենամյա արձակուրդի չօգտագործված մասը՝ 21 աշխատանքային օր:

2. Լ. Զաքարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում «Կապանի N 1 հիմնական դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել նույն կազմակերպության մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենի տեղակալ Մելինե Կոստանյանին:

Recoverable Signature

Ստորագրող
ՌՈԲԵՐՏ ՂՈՒԿԱՍՅԱՆ
3712800290

Signed by: GHUKASYAN ROBERT 3712800290

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ **Ռ. ՂՈՒԿԱՍՅԱՆ**

2025թ. հուլիսի 10
ք.Կապան